

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 21-24-ը Ղրղզական Հանրապետության (ք. Չոլփոն-Աթա)
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզական Հանրապետություն (ք. Չոլփոն-Աթա) 21.06.2017թ.-24.06.2017թ.

4. Հրավիրող կողմը՝

Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր Հակամենաշնորհային կարգավորման պետական գործակալություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել է 2017 թվականի հունիսի 21-24-ը Ղրղզական Հանրապետության Չոլփոն-Աթա քաղաքում կայանալիք սպառողների շահերի պաշտպանության հարցերով Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) անդամ-երկրների Խորհրդատվական խորհրդի և Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ ՀՔՄԽ) համատեղ երկրորդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել է ԱՊՀ անդամ-երկրների շուկաներ անորակ ապրանքների ներմուծումը կանխելու և դրա մասին նախազգուշացնելու նպատակով՝ ԱՊՀ ճյուղային մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ գործողությունների համակարգման հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

ԱՊՀ շրջանակներում անցկացված հիմնական միջոցառումները և անդամ-երկրների սոցիալ տնտեսական վիճակը,

